

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2013թ. Տ Ա Ր Ե Կ Ա Ն Հ Ա Շ Կ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

Հարգարժան համագյուղացիներ և հյուրեր, այսօր Ձեր քննարկմանն են ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածանի գյուղապետարանի և ավագանու կողմից 2013 թվականի ընթացքում կատարված աշխատանքների մասին:

Ես կներկայացնեմ յուրաքանչյուր բնագավառ առանձին - առանձին և վերջում կղրվի քննարկման և կլսենք Ձեզանից յուրաքանչյուրի կարծիքն ու առաջարկությունը:

1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական համայնքի բյուջե 2013թվականին հաստատվել են՝
Եկամուտներ ընդամենը՝

h/h	Եկամուտներ	2013թ. հաստատված	2-րդ կիսամյակի կատարողականը	կատարողականը առ.01.07.2013թ. o/o
1	Հողի հարկ	4837.4	4669.3	96.5
2	Գույքահարկ	1600.0	1400.0	87.5
3	Վարձակալական հողի հարկ	88.5	88.5	100
4	տեղական տուրքեր	190.0	74.9	39.4
5	տեղական վճարներ	1000.0	---	---
6	այլ ոչ հարկային եկամուտ	---	10.0	
7	ընդամենը սեփական եկամուտներ	7715.9	6242.7	80.9
8	մնացորդ առ 01.01.2013թ.	465.6	460.0	-----
9	դոտացիա	13861.6	13861.6	100.0
10	սուբվենցիա	364.0	364.0	100.0
	Ընդամենը	21941.5	20468.3	93.2

Ընդամենը եկամուտներ 21941.5 հազ. դրամ

2013թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ կատարվել են հետևյալ ծախսերը ըստ բնագավառների

1. Տեղական ինքնակառավարման ապարատի պահպանման համար

1) աշխատավարձ	11954.6
2. էլ. ծախսեր	1020.0
3. կապի ծառայություն	225.0
4. գույքի և սարքավորումն.	420.0
5 ներկայացուցչական ծախսեր	202.0
6. ընդհանուր բնույթի այլ	200.0
7 համակարգչային ծառայություն	30.0
8 գրասենյակային նյութեր	250.0
9 ընթացիկ նորոգում	448.0
10 մասնագիտական ծառայութ.	557.0
11 տեղեկատվական ծառայութ.	68.0
12 դրամաշնորհ	2250.0
13 վարչական սարքավորումներ	849.1

ընդամենը 18473.7 հազ.դրամ

2. Շրջակա միջավայր

1. Աղբահանում 640.0

ընդամենը 640.0 հազ.դրամ

3. Սշակույթ, սպորտ և կրոն

1. երիտասարդական ծրագիր 800.0

ընդամենը 800.0 հազ.դրամ

4 Սոցիալական պաշտպանություն

1. սոց. օգնություն 1000.0

ընդամենը 1000.0

ընդամենը ծախսեր՝ 20913.7 հազ.դրամ

2. Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառ

1. Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է՝ քաղաքացիների ընդունելության օր. որի ժամանակ լուծվում են բնակիչների բազմաթիվ խնդիրներ:
2013թվականին համայնքի բնակիչներին տրվել է 290 տեղեկանքներ, 73 գրություններ այ կազմակերպություններին, ստացվել է 5 դիմում - բողոք, որից 4 բավարարվել է:
2. Պաշտպանվում են համայնքի բնակիչների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը:
3. Համայնքում կատարվել է բնակիչների սեռա - տարիքային ամենամյա հաշվառում

3. Հասարակական կարգի պահպանության բնագավառում

1. Համայնքում պահպանվել է կարգ ու կանոն , մեծ խախտումներ համայնքի բնակիչների կողմից չեն կատարվել

2. Համայնում կատարված իրավախախտումների մասին ոստիկանության ներկայացուցչի տրված տեղեկատվության համաձայն որոշ անձինք ենթարկվել են վարչական պատասխանատվության:

4. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Աջակցել ենք գարնանային և աշնանային զորակոչին, ուսումնավարժական հավաքներին:
2. Աջակցել ենք Արցախի պատերազմի մասնակիցների և զոհվածների ընտանիքների հանգստի և սոցիալական խնդիրներին:
3. Աջակցել ենք ՔՊ մարմինների գործունեությանը:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Աջակցել ենք սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական պայմանների բարելավմանը: Համայնքի 42 ընտանիքների տրվել է դրամական օգնություն:

6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Համայնքի գյուղացիական տնտեսությունների համար ձեռք է բերվել պարարտանյութ և դիզ. վառելանյութ:
2. Աջակցել ենք գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը:
3. Մաքրվել է համայնքի ոռոգման ցանցի որոշակի տարածքներ:
4. Կազմակերպվել է համայնքի կենդանիների և թռչունների հաշվառում:

7. ՄՇԱԿՈՒՅԹ , ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՂՈՒԹՅՈՒՆ

1. «Քաունթերփարթ ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության և համայնքի մասնակի ներդրումների շնորհիվ ամբողջովին հիմնանորոգվեց համայնքի մշակույթի տունը, բարեկարգվեց մշակույթի տան տարածքը, որտեղ տեղադրվեց տաղավար և աղբամաններ
2. Աշխատում է համայնքի բուժ. կետը
3. Մշակույթի տանը կազմակերպվում և անցկացվում են միջոցառումներ:
4. Գործում է գրադարանը, որը համալրված է համապատասխան գրականությամբ:

8. ԿՈՍՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Կենցաղային աղբի կուտակման համար համայնքում չկա առանձնացված տարածք: Շրջակա միջավայրը մաքուր պահելու համար ամեն տարի, բյուջեի ձևավորման ժամանակ, հատուկ ուշադրություն է դարձվում աղբաթափման աշխատանքների վրա:
2. Համայնքում շաբաթը 1 անգամ կատարվում է աղբաթափման աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում՝ 2 անգամ:
3. Բարեկարգվել են գյուղամիջյան փողոցները և դաշտամիջյան ճանապարհները ավազահողային ծածկույթով:

Ծիածանի գյուղական համայնքում 2014 թվականին նախատեսվում է կատարել հետևյալ աշխատանքները

1. Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում:

2. Ոռոգման ցանցի մասնակի նորոգում:
3. Փողոցներում գիշերային լուսավորության անցկացում:
4. Գյուղ մտնող կենտրոնական փողոցի 1.5 կմ ասֆալտապատում
5. Գյուղ. մթերքների շուկայական ցածր գները և բերքի իրացման հետ կապված դժվարությունները

Համայնքի ղեկավար՝
Աշխատակազմի քարտուղար՝

